ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու, ՄՄ
ԳԱԳԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու, ՄՄ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՀՈՒԼԱԳՈՒԻ 1260 Թ. ԱՍՈՐԻՔՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻՑ ՀԵՏՈ

ԺԳ. դարի կեսերը բախտորոշ ժամանակաշրջան էին Կիլիկիայի Հայոց թագավորության համար: Սա կապված էր հիմնականում դեպի Առաջավոր Ասիա եւ Մերձավոր Արեւելք մոնղոլների հաղթական շարժի եւ տարածաշրջանում ձեւավորված նոր աշխարհաքաղաքական իրադրության հետ: Հեթում արքայի (1226-1269 թթ.) դիվանագիտական հեռատեսությունը թույլ տվեց խուսափել նոր նվաճողների հետ բախումից եւ երկիրը զերծ պահել նրանց ավերիչ ներխուժումից: Հատկանշական է, որ մինչեւ մոնղոլների հայտնվելը Հայոց թագավորությունը գտնվում էր Ռումի կամ Իկոնիայի սելջուկյան սուլթանության գերիշխանության ներքո[1]*: Սակայն երբ 1243 թ. Քյոսեդաղի (Զմանկատուկի)*

[1] Սրա համար հիմք է տալիս առկա դրամագիտական նյութը, քանզի հայտնի է, որ Ալա ալ-Դին Քայկուբաղ (կառ. 1220-1237 թթ.) եւ Ղիյաս ալ-Դին Քայխոսրով (1237-1246 թթ.) սուլթանների օրոք հատվել են հայ-սելջուկյան երկլեզվյան դրամներ, որոնց մի երեսին դրոշմված է «Հեթում թագաւոր հայոց», իսկ դարձերեսին՝ հիշյալ սուլթանների անունների արաբատառ մակագրություններն են: Տես **P. Z. Bedoukian**, Coinage of Cilician Armenia (Revised edition), Danbury, Connecticut, 1979, p. 227-235: Միջնադարյան աղբյուրներում Իկոնիայի սուլթանությանը հայոց թագավորության հարկ վճարելու մասին վկայություններ չգտնելով՝ որոշ հետազոտողներ կարծիք են հայտնել, որ այդ դրամները կտրվել են առեւտրատնտեսական նպատակներով (**Պ. Սապպաղեան**, Հեթում Ա.-ի Հեթում-Զապէլ եւ երկլեզուեան դրամներու մասին, ՀՀՀՍ, Ը., Պէյրութ, 1980, էջ 233-248), սակայն ամենատարածված տեսակետն այն է, որ Հեթումը դրանք հատել է ի նշան իր հնազանդության, որը, հավանաբար, ձեւական բնույթ էր կրում: Տես **P. Bedoukian**, Coinage, p. 84: Հմմտ. **Cl. Cahen**, La Turquie pré-ottomane (Varia Turcica VII), Institut Français d'Études Anatoliennes, Istanbul, 1988, p. 88-89: Տես նաեւ **Y. T. Nercessian**, Attribution and Dating of Armenian Bilingual Trams, Armenian Numismatic Society, Special Publication № 2, Los Angeles, 1983: Հմմտ. **A. D. Stewart**, The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He'tum II (1289-1307), Brill, Leiden, 2001, p. 43-44, n. 2. **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ., Պատմա-քաղաքագիտական հետազոտություն (Հայկա-

ճակատամարտում կրած ծանր պարտությունից հետո մոնղոլներին հնազանդվեցին նաեւ Ռումի սելջուկները, վտանգը շատ մոտ էր եւ, հետեւաբար, միջազգային դիվանագիտական նոր հայեցակարգի որդեգրումը օրապահանջ դարձավ նաեւ Կիլիկյան Հայաստանի համար: Ձեւավորված քաղաքական պայմաններում երկրի ռազմավարչական վերնախավը՝ հանձին Հեթում թագավորի, որոշում կայացրեց, մոնղոլների գերակայությունն ընդունելով, հաշտության եզրեր փնտրել նրանց հետ: Այդպես, Սմբատ Սպարապետի 1247-1248 եւ Հեթում արքայի 1254 թվականներին Կարակորում կատարած այցելություններով հայ-մոնղոլական հարաբերությունները պաշտոնական բնույթ ստացան: Հայ-մոնղոլական դաշինքի ամրագրումից հետո Կիլիկիան մոնղոլներից ռազմաքաղաքական անվտանգության երաշխիքներ ձեռք բերեց, փոխարենը՝ հուսալի հենարան դարձավ վերջիններիս՝ դեպի արեւմուտք ընդարձակվելու նկրտումների կենսագործման համար: Հայոց պետությունը որոշ հարկային պարտավորություններ[2] *(իր արտաքին քաղաքական շահերը Մոնղոլական տերության եւ հետո նաեւ Իլխանության քաղաքական շահերին հարմարեցնելու նպատակով) եւ նրանց ռազմական ձեռնարկումներին մասնակցելու հանձնառություն ստանձնեց, բայց, ի տարբերություն Ռումի սելջուկյան սուլթանության, պահպանեց ներքին անկախությունը եւ պետական իշխանության ինքնուրույնությունը:*

Մինչեւ 1256 թ. ավարտին հասցնելով Իրանի նվաճումը՝ մոնղոլ մեծ խան Մանգուի եղբայրը՝ Հուլաղուն, փաստորեն հիմքը դրեց մի նոր մոնղոլական պետական կազմավորման, որին մենք այսօր Իլխանություն (1260-1335 թթ.) ենք կոչում[3]*: 1258 թ. չեզոքացնելով Ալամուտի իսմա-*

կան մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան), Երեւան, 2007, էջ 299-301: Այնուամենայնիվ, մեզ հայտնի աղբյուրներից Ռումի սուլթանությանը հայոց թագավորության հարկատու լինելու մասին բազմաթիվ ակնարկներ կան հատկապես պարսկագիր Իբն Բիբիի, իսկ արաբագիր հեղինակներից՝ ալ-Ումարիի աշխատություններում:

[2] Համդալլահ Կազվինին, ով թեեւ վերոհիշյալ դեպքերից 60-70 տարի անց է գրում, այնուամենայնիվ, արձանագրում է, որ «Փոքր Հայաստանը, որ *Իրանի մաս չի կազմում*» (ընդգծումը մերն է), որպես տարեկան հարկ ընդամենը 30 հզ. դինար էր վճարում իլխանական Իրանի գանձարան: Համեմատության համար նշենք, որ նույն հեղինակի վկայությամբ՝ Իկոնիայի սուլթանությունից գանձվում էր 3 մլն. 200 հզ. դիրհամ, իսկ Վրաց թագավորությունից 1 մլն. 200 հզ. դինար հարկ: Տե՛ս **Ḥamd Allāh Mustawfī Qazwīnī,** Kitāb Nuzhat al-qulūb, Barīl, Laydan, 1913, ṣ. 100, ինչպես նաեւ The geographical part of the **Nuzhat-al-Qulūb** composed by Hamd-allah Mustawfi of Qazwin in 740 (1340), tr. by G. Le Strange, Leiden-London, 1919, p. 100. Հմմտ. **Г. Г. Микаелян,** История Киликийского Армянского государства, Ереван, 1952, с. 316. **Լ. Տեր-Պետրոսյան,** նշվ. աշխ., էջ 311-313:

[3] Գիտական գրականության մեջ Հուլաղուին եւ նրա հաջորդներին տրված ilḫān տիտղոսի մի քանի ստուգաբանություններ կան, թեեւ նրանցից ամենատարածվածը «ենթա-

յիլականներին եւ գրավելով Բաղդադն ու վերացնելով Աբբասյան խալիֆայությունը՝ նա արդեն պատրաստ էր ներխուժելու Ասորիք, որտեղ դեռ շարունակում էին գոյատեւել կործանված Այյուբյան դինաստիայի մնացուկները: Հուլաղուի 1260 թ. ասորիքյան արշավանքի եւ դրանում Հայոց արքա Հեթումի ունեցած դերակատարության մասին մի առանձին հոդված հրապարակվել է[4]*: Ճիշտ է՝ Այն Ջալուտի ճակատամարտում (1260 թ. սեպտեմբերի 3) մամլուքներից կրած պարտությամբ Հուլաղուն ձախողեց Ասորիքում հաստատվելու մոնղոլների առաջին հնարավորությունը, բայց նրան հաջորդած տիրակալները բնավ չհրաժարվեցին այդ նպատակից: Հետագայում եւս՝ 1281, 1299, 1300, 1303, 1312-1313 թթ., մոնղոլ իլխանները կրկին մեծ արշավանքներ ձեռնարկեցին դեպի Ասորիք, թեեւ բոլոր այս դեպքերում, չնայած դաշնակիցներից եւ հպատակ երկրներից՝ Խաչակրաց պետություններից, Վրաստանից, Ռումի սուլթանությունից եւ հատկապես Կիլիկյան Հայաստանից, ստացած օգնությունը եւ արձանագրած ժամանակավոր հաջողություններին՝ վերջին հաշվով պարտված դուրս եկան Մամլուքյան սուլթանության դեմ պայքարում: Ռ. Ամիտայը սրա ամենահավանական պատճառ է նշում այն, որ այս երկու տարածաշրջանային ուժերի վաթսունամյա դիմակայության ընթացքում Իլխանության հետ հարաբերությունները գրեթե մշտապես առաջին տեղն էին զբաղեցնում Մամլուքյան սուլթանության արտաքին քաղաքականության օրակարգում, մինչդեռ Իլխանության դեպքում Սուլթանության հետ հարաբերություններից էլ ավելի կարեւոր առաջնահերթություն կար՝ Ջոչիի մոնղոլական ուլուսի կամ Ոսկե Հորդայի հետ պատերազմը կովկասյան ճակատում միանձնյա գերիշխանության հասնելու համար*[5]*:*

Մոնղոլների հետ հաստատած դաշնակցությունը հնարավորություն տվեց Հայոց թագավորությանը որոշ տարածքային ձեռքբերումներ ունենալ եւ տիրանալ այն հողերին, որոնք մի ժամանակ Գող Վասիլին էին պատկանել[6]*, իսկ այդժամ Հալեպի Այյուբյանների տիրույթների մաս էին*

կա խան» բացատրությունն է, որ շեշտում է նրանց ստորադասությունը Կարակորումում նստող Մեծ խանին: Տես **Th. Allsen**, Mongol Imperialism, Berkeley, 1987, p. 48: Հմմտ.՝ **R. Amitai-Preiss**, Mongols and Mamluks: The Mamluk-Īlkhānid War, 1260-1281, Cambridge, 1995, p. 13-14:

[4] Տես **Գ. Դանիելյան**, Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները (արաբական աղբյուրների քննություն), ՎՀՀ, թ. 1 (49), հունվար-մարտ 2015, էջ 141-154:

[5] Տես **R. Amitai**, Holy war and rapproachment: Studies in the Relations between the Mamluk Sultanate and the Mongol Ilkhanate (1260-1335), Brepols, Turnhout, 2013, p. 15-16.

[6] Տես **Cl. Cahen**, La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche,

կազմում: Այսպես, ըստ Հեթում արքայորդու «Ճաշոց»-ի (1286 թ.) հիշատակարանի՝ «...նա (Հեթումը - Գ. Դ.) աւգնութեամբն Աստուծոյ եւ ձեռնտուութեամբ Մուղալ զաւրուն էառ զմեծն Գերմանիկէ (իմա՝ Մարաշը) եւ զ Պեհեսնի»[7]:

Ըստ Իբն ալ-Շիհնայի՝ հիջրայի 656 թ. (1258 թ.) Մարաշը գտնվում էր Իմադ ալ-Դին անունով մի կառավարչի ձեռքում, որի ընտանիքը քաղաքին տիրում էր արդեն 50 տարուց ավելի: Պատմիչը շարունակում է, որ «Իմադ ալ-Դինը աղաջիրների (աղաչ-էրի)[8] եւ հայերի հարձակումների հաճախացման պատճառով այլեւս անկարող էր պահել այն: Նա նամակ գրեց Ռումի տեր Իզզ ալ-Դին Քայկավուսին՝ բերդը նրան հանձնելու մտադրությամբ, բայց վերջինս հրաժարվեց: Գրեց նաեւ Ասորիքի տեր ալ-Մալիք ալ-Նասիր Սալահ ալ-Դինին, բայց վերջինս նույնպես հրաժարվեց ընդունել բերդը: Եւ երբ նրա վիճակը բարդացավ, [հարկադրված] թողեց այն եւ հեռացավ, որից հետո նրան տիրեցին հայերը»[9]:

Այն մասին, որ Հուլաղուի ասորիքյան արշավանքի արդյունքում Հեթումը տիրացել է Բեհեսնային, կամ Բեհեսնիին, արաբագիր հեղինակները նույնպես հաղորդում են, միայն թե դեպքն իրարից դույզն-ինչ տար-

---

Geuthner, Paris, 1940, p. 705. **S. Der-Nersessian**,The Kingdom of Cilician Armenia, A History of the Crusades, vol. II: The Later Crusades 1189-1311, gen. ed. K. M. Setton, Wisconsin, 1969, p. 653. **M. Canard**, Le Royaume d'Armenie-Cilicie et de Mamelouks jusq'au traité de 1285, Revue des Études Arméniennes, 1967, p. 222.

[7] Տես Մատենադարանի ձեռ. թ. 979 («**Հեթում Բ. արքայի Ճաշոցը**»), թերթ 475ա, ինչպես նաեւ **Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ** (հետայսու՝ ՀՁՀ), ԺԳ. դար, կազմեց **Ա.Ս. Մաթեւոսյան**, Երեւան, 1984, էջ 587: Հմմտ. **Hayton**, La Flor des estoires de la Terre d'Orient, Recueil des historiens des croisades. Documents arméniens, t. 2, p. 171 եւ **Վահրամայ Բարունայ** Ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 220: Տես նաեւ **R. Grousset**, The Empire of the Steppes, tr. from French by Naomi Walford, New Brunswick, New Jersey, 1970, p. 362. **Cahen Cl.**, La Syrie, p. 705. **Г. Г. Микаелян**, История, с. 333. **A. D. Stewart**, Kingdom, p. 46-47, n. 10. **Cl. Mutafian**, L'Arménie du Levant (XIe-XIVe siècle), Tome 1, Paris, 2012, p. 149.

[8] Բնագրում՝ 'aǧāǧiriyya (բառացի՝ «անտառի մարդիկ», «ծառերի մարդիկ»): Աղաչ-էրիները թյուրք-օղուզական ցեղախմբեր էին, որ սովորություն ունեին անտառներում բնակվել: Տես **Рашид-ад-Дин**, Сборник летописей, том I, книга I, пер. с персидского Л. А. Хетагурова, ред. и примечания А.А. Семенова, Москва-Ленинград, 1952, с. 85.

[9] Տես **Ibn al-Šiḥna**, Al-Durr al-muntaḫab fī tārīḫ mamlakat Ḥalab, bi-taḥqīq 'Abd Allāh Muḥammad Darwīš, Dār al-kitāb al-'arabī, Dimašq, 1984, ṣ. 192: Իբն Բիբին նույնպես գրում է Մարաշի վրա աղաչ-էրիների հաճախակի հարձակումների մասին, որոնք, ըստ նրա, «ճանապարհներ եւ քարավաններ էին կտրում, հրոսում Ռումի երկրի, Ասորիքի եւ հայերի վրա»: Տես Recueil de Textes Relatifs à L'Histoire des Seldjoucides par M. Th. Houtsma, vol. III, Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'aprés l'abrégé du Seldjoucnāmeh d'**Ibn-Bībī**, Leide, 1902, ṣ. 284: Հմմտ. **Cl. Cahen**, La Turquie, p. 240-241.

բերվող պատումներով են ներկայացնում: Ըստ Իզզ ալ-Դին իբն Շադդադի՝ մինչեւ մոնղոլների արշավանքը, Բեհեսնին Հալեպի սուլթան ալ-Նասիր Յուսուֆի տիրույթներից էր: Եւ երբ գրոհվել էր Ասորիքը, փորձ էր կատարվել գրավել այն, բայց տեւական պաշարման արդյունքում, այն թողնվել էր: Զորքերը առաջ էին ընթացել Հալեպի ուղղությամբ, որի առումից հետո մոնղոլները կրկին վերադարձել եւ վերսկսել էին պաշարումը առավել մեծ ուժով եւ ի վերջո գրավել: Բայց նրա բնակչությունը հրաժարվել էր «Սսի տիրոջ» հպատակությունից, ուստի այնտեղ մուսուլման կառավարիչ էր նշանակվել: Բայց որոշ ժամանակ անց բերդի բնակիչները, իրենց անվտանգ չզգալով, ի վերջո ստիպված էին եղել բերդը հանձնել հայերին[10]:

Իբն Շադդադի պատումին հակառակ՝ ալ-Ջազարի պատմիչը հիջրայի 692 թ. (1293 թ.) իրադարձությունների շարադրանքում, երբ խոսում է Սսի երկրի հետ կնքված հաշտության արդյունքում մամլուքներին հանձնված բերդերի (Բեհեսնի, Մարաշ, Թել Համդուն) մասին, գրում է. «[Բեհեսնան] Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիր Սալահ ալ-Դին Յուսուֆի ժամանակներում, որպես իր երկրի տիրույթներից մեկը, գտնվում էր նրա կառավարիչների ձեռքում: Երբ թաթարները Հալեպ եկան եւ տիրացան նրան, այնտեղի (Բեհեսնայի) կառավարիչն էր էմիր Սայֆ ալ-Դին ալ-Ակրաբը, ով վաճառեց այն Սսի տիրոջը հարյուր հազար դիրհամի դիմաց: Վերջինս նրան տվեց վաթսուն հազար դիրհամ եւ վերցրեց բերդը, որ ցայժմ նրանց ձեռքին էր եւ մեծ տառապանք էր պատճառում մուսուլմաններին»[11]*: Այս պատմությունը վերապատմում է նաեւ ալ-Ջահաբին, միայն թե գրում է, որ բերդը 100 հզ. դիրհամով «Սսի տիրոջ» համար գնել է Հուլաղուն, որից հետո Հեթումն իր հնազանդությունն է*

[10] **ʿIzz al-Dīn ibn Šaddād**, Al-Aʿlāq al-ḫaṭīra fī ḏikr umarāʾ al-Šām wa-l-Ǧazīra, ǧ. 1.2, bi-taḥqīq Yaḥyā Zakaryā ʿAbbāra, Dimašq, 1991, ṣ. 118-119.

[11] Slíu **al-Ǧazarī**, Tārīḫ Ḥawādiṯ al-zamān wa-anbāʾuhu wa-wafayāt al-akābir wa-l-aʿyān min abnaʾihi al-maʿrūf bi-tārīḫ ibn al-Ǧazarī, ǧ. 1, bi-taḥqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmūrī, al-Maṭbaʿa al-ʿAṣriyya, Ṣaydā-Bayrūt, 1999, ṣ. 149: Հմմտ. **al-Ḏahabī**, Al-Muḫtār min tārīḫ ibn al-Ǧazarī, bi-taḥqīq Ḫaḍīr ʿAbbās Muḥammad Ḫalīfat al-Munšadāwī, Dār al-Kitāb al-ʿArabī, Bayrūt, 1988, ṣ. 358: **Mufaḍḍal ibn Abī al-Faḍāʾil**, al-Nahǧ as-sadīd wa-durr al-farīd fīmā baʿda tārīḫ ibn al-ʿAmīd (Moufazzal ibn Abil-Fazaïl, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet, Patrologia Orientalis, t. 14, Paris, 1920, ṣ. 558 [p. 394]. **al-Nuwayrī**, Nihāyat al-arab fī funūn al-adab, ǧ. 31, bi-taḥqīq Naǧīb Muṣṭafā Fawwāz, Ḥikmat Kišlī Fawwāz, Ibrāhīm Šams al-Dīn (և այլոց), Dār al-Kutub al-ʿIlmiyya, Bayrūt, 2004, ṣ. 157. **Ibn al-Dawādārī**, Kanz al-durar wa-ǧāmiʿ al-ġurar, ǧ. 8, bi-taḥqīq Ūlrīḫ Hārmān, al-Qāhira, 1971, ṣ. 341. **Ibn al-Furāt**, Tārīḫ al-duwal wa-l-mulūk, ǧ. 8, bi-taḥqīq Qusṭanṭīn Zurayq wa-ʿIzz al-Dīn Naǧla, Bayrūt, 1939, ṣ. 155-156:

հայտնել նրան[12]: Բերդին տիրելու՝ մյուս պատմիչներից տարբերվող մեկ այլ պատմություն է տալիս ալ-Այնին: Նա մասնավորապես գրում է. «Այն [նախկինում] Հալեպի տարածքների մաս էր, պատկանում էր մուսուլմաններին, եւ նրա վրա իշխողը Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիրն էր: Այդպես էր, քանի դեռ Հուլավուն չէր մտել Հալեպ եւ գրավել բոլոր երկրները: Երբ թաքֆուրը՝ Սսի տերը, իմացավ, որ Հուլավուն այն [նույնպես] գրավել է, նրա մոտ գնաց եւ նվերներով շողոքորթեց, գումար տարավ նրան՝ խնդրելով, որ Բեհեսնան իրենը լինի, եւ նա էլ հանձնեց նրան»[13]:

1262 թ. Թորոս Ռոսլինի ձեռքով գրված մի ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Հեթումը մի շարք բերդեր է խլել նաեւ Ռումի սուլթանությունից: «Այլեւ բարեպաշտութեամբն իւրով յԱստուած զորացեալ հէրքեբ զհոյս հաքարածին ծննդոցն եւ անաւրինաց սեռիցն, բազում անգամ յաղթեալ սուլտանին Հոռոմոց, եւ առեալ զամուրս նորա՝ զանմատչելին Մունտաս, եւ զՄանիաւնն, զԸսիկի եւ զայլս բազում զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ: Որ եւ յայսմ ամի առ նա եւ զամուր դղեակն զհոյակապ եւ զյգանաւորն Պեհեսնի, որ աւր Ի եւ Ե (25) էր ամսէանն հոգտեմբերի»[14]: Ստացվում է՝ Բեհեսնին գրավվել է 1262 թ. հոկտեմբերի 25-ին:

Մարաշից եւ Բեհեսնիից բացի հայոց թագավորությանն են անցել նաեւ Ռաբանը, Քեսունը, Դարպսակը, Մարզուբանը (Մարզաբան), Շիհ ալ-Հադիդը[15]: Ըստ Իզզ ալ-Դին իբն Շադդադի՝ եւս մեկ բերդ՝ Բուրջ ալ-Ռասսասը, մինչեւ թաթարների արշավանքը գտնվում էր «Նասիրյան պետության» (իմա՝ Հալեպի սուլթան ալ-Նասիր Յուսուֆի տիրության)

---

[12] Տես **al-Ḏahabī**, Tārīḫ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-aʿlām, ğ. 52, bi-taḥqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmūrī, Dār al-kitāb al-ʿarabī, Bayrūt, ṣ. 22, ինչպես նաեւ **նույնի՝** Duwal al-Islām, ğ. 2, bi-taḥqīq Ḥasan Ismāʿīl Marwa, Dār Ṣādir, Bayrūt, 1999, ṣ. 218: Հմմտ. **Ibn Taġrī Birdī**, Al-Manhal al-Ṣāfī wa-l-Mustawfī baʿda al-Wāfī, ğ. 5,, bi-taḥqīq Muḥammad Muḥammad ʿAmīn, al-Hayʾa al-Miṣriyya al-ʿĀmma li-l-Kitāb, al-Qāhira, ṣ. 275:

[13] **Al-ʿAynī**, ʿIqd al-ğumān fī tārīḫ ahl al-zamān, ğ. 3, bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Hayʾa al-miṣriyya al-ʿāma li-l-kitāb, al-Qāhira, ṣ. 151-152.

[14] Տես **ՀՁՀ**, ԺԳ. դար, էջ 317: Հմմտ. «Մմբատայ Սպարապետի Տարեգիրք», աշխատասիրութեամբ Հ. Սերովբէ Ազըլեանի, Վենետիկ, 1956, էջ 234-235 (պատմում է Մոնդաս բերդի գրավման հանգամանքների մասին). «Մանր Ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», կազմեց **Վ. Ա. Հակոբյան**, հ. Ա., Բ., Երեւան, 1951, էջ 82. նույնի՝ հ. Բ., Երեւան, 1956, էջ 71 եւ **Կ. Մաթեւոսյան**, Հեթում Պատմիչ Կոռիկոսցին եւ նրա ժամանակագրությունը, Երեւան, 2011, էջ 53, ինչպես նաեւ «Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն», աշխատասիրությամբ Կ. Մաթեւոսյանի, Երեւան, 2014, էջ 251:

[15] Տես **ʿIzz al-Dīn ibn Šaddād**, Al-Aʿlāq al-ḫaṭīra, ğ. 1.2, ṣ. 115, 421, 434 եւ հմմտ. **Ibn al-Šiḥna**, Al-Durr al-muntaḫab, ṣ. 171, 223, 226:

կազմում: Ասորիքի գրավման ժամանակ այն ավերվել է, եւ նրան հարակից մի շարք գյուղեր անցել են հայերի ձեռքը[16]*:*

Այս նվաճումներով հայկական պետության սահմանները, փաստորեն, կարճ ժամանակով ընդարձակվեցին՝ ընդհուպ մինչեւ Եփրատ գետը: Հայոց հայրապետական աթոռը՝ Հռոմկլան, ըստ այդմ, առաջին անգամ աշխարհագրորեն միացավ Կիլիկիո հայոց թագավորությանը[17]*: Այնուամենայնիվ, Հուլաղուի նահանջից հետո նույն այդ հայ-մոնղոլական դաշնակցությունը մեկընդմիշտ սեպ դարձավ հայ-մամլուքյան հարաբերություններում եւ վերահաս սպառնալիք՝ հայոց թագավորության համար: Ալ-Ումարին, թեեւ այս դեպքերից 70-80 տարի անց է գրում, այնուամենայնիվ, հայ-մոնղոլական դաշնակցության պատճառով հայերին հայտարարում է. «իսլամի ամենավտանգավոր թշնամիներ»* (aḫbaṯ͑ udwin li-l-Islām)[18]*, որոնց վրա «Հուլաղույան տան (հարստության) արքաները մեծ ուժ եւ ազդեցություն ունեին, մինչեւ որ նվազեց նրանց ուժը, թուլացավ դաժանությունը, նրանց (հայերի) անտառը դատարկվեց նրանց առյուծներից»*[19]*:*

Հեթումը չբավարարվեց հիշյալ տարածքային ձեռքբերումներով եւ փորձեց առավելագույնս օգուտ քաղել ստեղծված պատեհ քաղաքական իրավիճակից: Նա 1262-1264 թթ. ընթացքում մի քանի անհաջող արշավանք ձեռնարկեց Հյուսիսային Ասորիքի բնակավայրերի դեմ (Մաարրաթ Միսրին, ալ-Ֆուա, Սարմին, Ջաբալ Լայլուն, Այնթաբ եւ այլն): Մամլուքյան իշխանությունների պատասխանը շատ չուշացավ: Արդեն 1266 թ. սուլթան Բայբարս ալ-Բունդուկտարին (կառ. 1260-1277 թթ.) առաջին լուրջ հարվածը հասցրեց Կիլիկյան Հայաստանին: Այդ արշավանքն աղետալի հետեւանքներ ունեցավ հայոց թագավորության համար՝ երկրի համատարած ավերածությունից բացի պատճառ դառնալով նաեւ հայոց գահաժառանգ Լեւոնի եւ մի շարք այլ ազնվականների գերեվարության համար: Որդուն ցանկացած գնով գերությունից ազատելու՝ Հեթումի դիվանագիտական ջանքերը որոշ պտուղներ տվեցին : Ի վերջո, 1268 թ. Անտիոքում կնքված հաշտության պայմանագրով Հեթումը պարտավորվեց

---

[16] Տե՛ս **ʿIzz al-Dīn ibn Šaddād**, Al-A'lāq al-ḫaṭīra, ğ. 1.2, ṣ. 103:

[17] Տե՛ս **K. Raphael**, Muslim Fortresses in the Levant: Between Crusaders and Mongols, London-New York, 2011, p. 186, ինչպես նաեւ **Գ. Դանիելյան**, Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկներ), Ա. Բոզոյան, Ռ. Շուքուրով, Վ. Տեր-Ղեւոնդյան, Գ. Դանիելյան, Երեւան, 2016, էջ 244-245:

[18] **Al-ʿUmārī**, al-Ta'rīf bi-l-muṣṭalaḥ al-šarīf, bi-taḥqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-ʿilmiyya, Bayrūt, 1988, ṣ. 82.

[19] Նույն տեղում:

որպես փրկագին սուլթան Բայբարսին հանձնել վերջինիս շատ մտերիմ մի մամլուքի՝ Սունկուր ալ-Աշկար անունով, որին մեծ դժվարությամբ ազատել էր մոնղոլական գերությունից, ինչպես նաեւ զիջել բոլոր այն բերդերը, որոնց 1260-1262 թվականների ընթացքում տիրացել էր մոնղոլների օգնությամբ[20]*:*

Այսպիսով, մոնղոլների շնորհիվ 1260-1262 թթ. ձեռք բերված տարածքային նվաճումների մեծ մասը ժամանակավոր դուրս եկան, եւ 1268 թ. կրկին վերադարձվեցին մամլուքներին: Հատկանշական է, որ այս զիջումներով հայոց կաթողիկոսների նստավայր Հռոմկլան կրկին հայտնվեց Կիլիկյան Հայաստանից մեկուսացված վիճակում: Ամենացավալին, իհարկե, հայոց թագավորության կրած մարդկային կորուստներն էին, իսկ առեւտրատնտեսական «վերքերը» բուժելու եւ ավերված քաղաքները վերականգնելու համար երկիրը դեռ ուժ կգտներ: Առաջին անգամ Կիլիկյան Հայաստանը իրապես զգաց իր գոյության համար Մամլուքյան սուլթանության լուրջ վտանգը. բայց եւ այնպես մոնղոլների եւ արեւմտյան երկրների հետ գործակցությունը դեռ պիտի շարունակվեր:

РЕЗЮМЕ

Царь Киликийской Армении Хетум I (1226-1269) в 1258 г. занял город Мараш, находившийся до этого во власти Иконийских султанов. Но основная часть городов и крепостей, включенных в состав Киликийской Армении, принадлежала Эйюбидам и перешла к Хетуму I в результате похода монголов в 1260 г. под предводительством Хулагу. К Киликийской Армении - союзнику монголов, перешли Бехесни, Тил Хамдун, Рабан, Кесун, Дарбсак, Марзубан, Ших ал-Хадид, Бурдж аль-Рассас и др. По существу в 1260-1262 гг. вся Приевфратская область на короткий промежуток времени (1260-1268) перешла к Хетуму I. Однако большая часть этих территорий была утрачена вследствие нашествия мамлюкского султана Байбарса в 1266 г. и подписания армяно-мамлюкского соглашения 1268 г. В статье рассматриваются ценные сведения о вышеупомянутых событиях, найденные в трудах средневековых авторов XIII-XV вв.

[20] Հեթումին, այնուամենայնիվ, հաջողվել է պահպանել Բեհեսնին: Մամլուքյան պատմիչների հաղորդմամբ՝ մինչեւ Սունկուր ալ-Աշկարին Բայբարսի մոտ ուղարկելը հայոց արքան խնդրել էր նրան Կահիրե հասնելուն պես համոզել սուլթանին, որ Բեհեսնին թողնի Կիլիկյան Հայաստանին: Սունկուր ալ-Աշկարը հավատարիմ է մնացել իր խոստմանը, իսկ սուլթան Բայբարսը վերջինիս խնդրանքը չի մերժել: Վերոհիշյալ դեպքերի մասին մանրամասն տես **Գ. Դանիելյան**, Ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk երկը Կիլիկյան Հայաստանի 1250-1310 թթ. պատմության սկզբնաղբյուր (աղբյուրագիտական քննություն), թեկնածուական ատենախոսություն (անտիպ), Երեւան, 2015, էջ 118-149:

SUMMARY

In 1258, King Hethum I (1226-1269) of Cilician Armenia captured Mar'aš, which was in the dominion of the sultans of Iconium. However, most of the towns and fortresses in Cilician Armenia belonged to the Ayyubids and passed to Hethum I as a result of the campaign of Hulaghu in 1260. Bahasnā, Tall Ḥamdūn, Ra'bān, Kesoun, Darbsāk, al-Marzabān, Šīḥ al-Ḥadīd, Burj al-Rassas etc. passed to Cilician Armenia as to an ally of the Mongols. In fact, in 1260-1262 the former Euphratisia province passed to Hethum I for a short period of time (1260-1268). However, the major part of it was lost as a result of the campaign of the Mamluk sultan Baybars in 1266 and the signing of the Armenian-Mamluk agreement in 1268. In this article rich evidences about the historical sources of the 13th-15th cc. on the above-mentioned events are considered and examined.